ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 446-Ա

«29» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄԱՐԶԻ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-դ մասով, 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «Հայաստանի Հանրպետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին «Հանրակրթական ուսուցում» 1146 ծրագրի տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր կրթության 11001, 11002 և 11003 միջոցառումներով հատկացված գումարը բաշխել մարզի «Հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև՝ N1 հավելվածի համաձայն:

2. Հանձնարարել մարզի «Հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին՝ հատկացված գումարների շրջանակներում, սեղմ ժամկետում, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, կազմել նախահաշիվներ և ներկայացնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության վրա:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք.Եղեգնաձոր

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
446 ----------- որոշում

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին 1146 ծրագրի <տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթության> 11001,11002 և 11003 միջոցառումներով հատկացված գումարի վերաբաշխումը ըստ ՊՈԱԿ-ների

	2025թ					վերաբաշխում			2025թ			
Հ/Հ	Դպրոցի անվանումը	Ընդամենը	Տարրական	հիմնական	Միջնակարգ	Տարրական	հիմնական	Միջնակարգ	Տարրական	հիմնական	Միջնակարգ	Ընդամենը
1	*2*											
1	**Ազատեկի միջն (մ. դ.)**	**53009.4**	**17424.7**	**22066.1**	**13518.6**		**414.8**	**1345.9**	**17424.7**	**21651.3**	**12172.7**	**51248.7**
2	**Կարմրաշենի միջն. (բ/լ մ. դ.)**	**20773.1**	**10164.8**	**10608.3**	**0.0**			**-1345.9**	**10164.8**	**10608.3**	**1345.9**	**22119.0**
3	**Սերսի հիմն. (բ/լ մ. դ.)**	**31625.6**	**15466.0**	**16159.6**	**0.0**		**-414.8**		**15466.0**	**16574.4**	**0.0**	**32040.4**
	Ընդամենը	**105408.1**	**43055.5**	**48834.0**	**13518.6**	**0.0**	**0.0**	**0.0**	**43055.5**	**48834.0**	**13518.6**	**105408.1**